ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5/5.1.1-25
ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. հոկտեմբերի 27-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման **«Միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում միջազգային միջոցառման կազմակերպում» 5.1.1** ենթամիջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Լ.Բասմաչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Ա.Ոսկանյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

• **«Աութսորս»** ՍՊԸ-ի հետ 2025 թվականի հոկտեմբերի 13-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» N935-25 պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքների ամփոփման վերաբերյալ:

Լսեցին՝

Ի պատասխան ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտեի 2025 թվականի հոկտեմբերի 23-ի «Աութսորս» ՍՊԸ-ին ուղղված N08.8/24309-2025 գրության, Ընկերությունը 2025 թվականի հոկտեմբերի 24-ի N45275-2025 գրությամբ իր պատրաստակամությունն է հայտնել իրականացնել N935-25 Պայմանագրի շրջանակներում Կոմիտեի կողմից առաջարկված միջոցառումները (համապատասխան գրությունները կցված են): Միաժամանակ կազմակերպությունը առաջարկել է ֆինանսական նախահաշվում կատարել փոփոխություններ:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Ընկերության կողմից ուղարկված գրությունը և կից ներկայացված ֆինանսական նախահաշվի փոփոխված տարբերակը, որոշեց առաջարկել կազմակերպությանը ներկայացնել ֆինանսական նախահաշվի փոփոխության նպատակահարմարության առավել մանրամասն բացատրություն:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Առաջարկել** «Աութսորս» ՍՊԸ-ին ներկայացնել ֆինանսական նախահաշվի փոփոխության նպատակահարմարության առավել մանրամասն բացատրություն:

2. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան (Հանձնաժողովի նախագահ)	-	_____
Ս.Հովհաննիսյան	-	_____
Ա.Բաբայան	-	_____
Լ.Բասմաչյան	-	_____
Ա.Ոսկանյան	-	_____
Շ.Հովսեփյան	-	_____